

Տնտեսական ակտիվության էվոլյուցիան Հայաստանում. դասճառահեճանգային դրսևորումները և արդի խնդիրները



ԼԱՍՆԷԱ ԱՎՐԻԲԵԿՅԱՆ
s.գ.թ., որոֆեսոր

Կայուն տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն գործոններից է ձեռնարկատիրական գործունեությունը: Այն պարունակում է վերարտադրողական, սոցիալական, իրավական, մրցակցային, կարգավորիչ, սեփականատիրական, տեխնոլոգիական և այլ գործառույթներ, որոնք ապահովում են ձեռնարկատիրական գործունեության արդյունքները և կանխորոշում տնտեսական ակտիվության բնույթը:

Արդյունավետ ձեռնարկատիրական գործունեության կարևոր նախապայման է համարվում արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների անընդհատ կատարելագործումը, ինչը ենթադրում է հասարակական-տնտեսական վերարտադրության գործոնների նոր համադրություններ և ճկուն համամասնություններ: Այստեղ առանձնապես կարևորվում է նորամուծությունների և առաջավոր տեխնոլոգիաների դերը՝ որպես արդյունավետ ձեռնարկատիրական գործունեության և տնտեսական ակտիվության լուրջ գրավական:

Հայաստանում ժամանակակից ձեռնարկատիրական գործունեության ձևավորումը կարևորագույն ռազմավարական գործոն է երկրի հասարակական-տնտեսական կայուն զարգացման, ինչպես նաև համաշխարհային շուկայական հարաբերությունների արագ ինտեգրման գործընթացում:

Բայց, որպեսզի ձեռներեցությունը դառնա իրական ռազմավարական ռեսուրս, պետք է ճիշտ հասկանալ ձեռներեցության էությունը, նրա զարգացման տրամաբանությունը և շարժիչ ուժերը՝ յուրաքանչյուր շրջափուլային դրսևորումների ներքո: Այստեղ կարևոր է տնտեսական ակտիվության և ձեռնարկատիրական գործունեության զարգացումների ժամանակագրական դիտարկումը՝ սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը:

Տնտեսական ակտիվության արտահայտման ամենամախնակական դրսևորումներից է եղել միջնորդությունը: Այն ֆրանսերեն նշանակում է "accompagnement", ինչը հետագայում նույնացվում է ձեռներեց եզրի հետ: Առևտրային միջնորդությունը նրա ձևավորման սկզբնական շրջանում եկամուտ ստանալու նպատակով ապրանքի տիրոջ ու սպառողի միջև միջնորդավորող գործունեություն էր՝ արտահայտված ապրանքների առք ու վաճառքի ձևով: Միջնորդության գործերում գնորդի դերը պասիվ էր, իսկ առևտրականինը՝ ակտիվ, քանի որ հենց առևտրականն էր կրում առևտրային գործարքի իրազորման հետ կապված ռիսկերը (երկարատև ճանապարհորդությունների ժամանակ վտանգելով կյանքը՝ ենթարկվում էր բազմաթիվ ֆիզիկական և հոգևոր փորձությունների): Միջնորդության այս ձևը ընդունված է անվանել վաճառականություն:

Վաճառականությունը կարևոր տնտեսական դեր է ունեցել արդեն հին աշխարհում (Փյունիկիա, Կարթագեն, Հին Հունաստան, Հայաստան և այլն): Վաղ միջնադարում վաճառականությունն առավել զարգացած էր արաբական երկրներում, Հնդկաստանում, Չինաստանում: 11-12-րդ դարերին վաճառականությունն սկսում է տարածվել նաև Արևմտյան Եվրոպայում (Վենետիկ, Ճենովա, Հյուսիսային Գերմանիա): Այն հատկապես լայն թափ է ստացել 16-18-րդ դարերում՝ Նիդեռլանդներում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայի առանձին մարզերում, իսկ հետագայում՝ Ամերիկայում, Ասիայում և Աֆրիկայում¹: Չինաստանի և Եվրոպայի միջև առաջին առևտրային գործարքը կատարվել է մեծ ճանապարհորդ և միջնորդության հայտնի իրագործող Մարկո Պոլոն:

Միջնորդությունը, որպես տնտեսական ակտիվության դրսևորման ձև, ի հայտ գալով նախնադարյան-համայնական հարաբերությունների ժամանակաշրջանում, սոցիալական կառուցվածքի կարևոր բաղկացուցիչ է դառնում դասակարգային հասարակարգերում: Նրանք առանձնապես մեծ նշանակություն են ձեռք բերում ֆեոդալիզմի վերջին և կապիտալիզմի սկզբնական շրջանում, երբ վաճառականական կապիտալն սկսում է թափանցել արդյունաբերության ոլորտ: Այս փուլում վաճառականությունն ակտիվորեն մասնակցում է կապիտալի սկզբնական կուտակման գործընթացին և դառնում բուր-

1. Աբրահամյան Վ.Ա., Արիեստները Հայաստանում 4-18-րդ դդ., Երևան, 1956 թ., էջ 51, 87, 119:

ժուազիայի ձևավորման հենք: Ջարգացած կապիտալիզմի հասարակարգում միջնորդությունը կորցնում է իր ինքնուրույն դերն ու նշանակությունը:

Միջին դարերում ձեռներեց («*антрепренер*») հասկացության բովանդակությունն ավելի է ընդլայնվում: Ի լրումն առևտրային միջնորդների, ձեռներեց էին համարվում հասարակական տարաբնույթ միջոցառումների (շքերթների և տարբեր երաժշտական ներկայացումների) կազմակերպողները, լայնամասշտաբ շինարարական կամ արտադրական նախագծերի իրականացման համար պատասխանատուները և այլն: Նրանք առանձնապես ռիսկի չէին դիմում, ուղղակի՝ օգտագործելով առկա ռեսուրսները, զբաղվում էին նախագծի իրականացման գործերով: Ձեռներեցության ռիսկ հասկացությունը իր զարգացումն է ստացել 17-րդ դարում, երբ ձեռներեց սկսեցին անվանել այն մարդուն, ով պայմանագիր էր կնքում պետության հետ աշխատանքների իրագործման կամ որոշակի ապրանքների առաքման համար: Քանի որ պայմանագրի գինը նախօրոք պայմանավորվում էր, շահույթի կամ կորուստի չափը որոշվում էր ուղղակի ձեռներեցների հաջողություններով:

Թեև ձեռնարկատիրությունն ունի դարերի պատմություն՝ նրա մասին ժամանակակից պատկերացումը ձևավորվել է կապիտալիզմի կայացման և զարգացման ընթացքում, որի բարգավաճման հիմքը ազատ ձեռնարկատիրությունն է, իսկ զխավոր տարբերակիչ բնորոշիչը՝ ազատ մրցակցությունը:

Վաճառականության սկզբնավորումը և զարգացումը Հայաստանում

Հին Հայաստանում տնտեսական ակտիվության արտահայտման ամենակարգավորված դրսևորումներից էր վաճառականությունը: Այն Հայաստանում զարգացել է դեռևս հնագույն ժամանակներում, ինչին նպաստել է երկրի բարենպաստ աշխարհագրական դիրքը: Հայաստանը, լինելով տարանցիկ առևտրի կենտրոն (Փասիս (Ճորոխ), Երասխ (Արաքս), Եփրատ և Տիգրիս գետերով Հայաստանը հաղորդակցվել է Կասպից, Սև, Միջերկրական ծովերին և Պարսից ծոցին), մշտապես գտնվել է ակտիվ առևտրային հարաբերությունների մեջ: Այս հանգամանքն առանձնապես նպաստել է Վաղարշապատ, Արտաշատ, Երվանդաշատ, Ջարեհավան, Տիգրանակերտ, Վան և այլ քաղաքների զարգացմանը²: Վաճառականության բուռն զարգացումը Հայաստանում նույնպես նպաստում է այլ ոլորտների ու արհեստների զարգացմանը: Առանձնապես զարգանում և Հայաստանի տնտեսության հենքային ճյուղ է դառնում գյուղատնտեսությունն իր երկու հիմնական ենթաճյուղերով՝ երկրագործությամբ ու անասնապահությամբ: Բարձր զարգացման է հասնում խաղողագործությունը, պտղաբուծությունը, տեխնիկական մշակաբույսե-

րի աճեցումը: Օտարագրի և հայագրի պատմիչների վկայությամբ՝ այդ ժամանակաշրջանում հայկական գյուղերը բավական հարուստ էին և լի տարաբնույթ պաշարներով՝ ցորեն ու գարեհաց, գարուց պատրաստված խմիչք, հորած գինիներ, չամիչ, ընդեղեններ, քունջութի և բլեկնի ձեթ, ձի, ուղտ, կով, այծ, ոչխար, տնային թռչուններ և այլն³:

Հետաքրքիր է, որ դեռևս այն ժամանակներում Հայկական լեռնաշխարհում տեղումների պակասը լրացվում էր արհեստական ոռոգման ցանցերի միջոցով: Ոռոգող առուների համակարգը լայն տարածում ուներ Արարատյան դաշտում, որտեղ առանց ոռոգման հնարավոր չէր գյուղատնտեսության զարգացումը:

Գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց Հայաստանում զարգանում են արհեստները, մասնավորապես, քարագործությունը, մետաղագործությունը, կավագործությունը, հյուսնությունը, մանածագործությունը և այլն: Հատկապես զարգանում են զինագործությունը, զարդագործությունը, ոսկերչությունը, կենցաղային իրերի, մանվածքների պատրաստումը, զորագործությունն ու կարպետագործությունը, ապակեգործությունը և այլն: Արհեստների զարգացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծում մետաղական (երկաթ, պղինձ, կապար, անագ, ոսկի, արծաթ) և ոչ-մետաղական (չինամյուլթեր, բազմաթիվ տեսակի քարահանքեր, կերակրի աղ) օգտակար հանածոների ու անտառանյութի առկայությունը:

Արհեստագործության նեղ և մասնագիտացված ճյուղերի զարգացումը նպաստում է դրանց քաղաքներ և ավաններ տեղափոխմանը՝ հանգեցնելով շուկայի համար արտադրված ապրանքների տեսականու և ծավալի աճի:

Հայաստանում արհեստների, ապրանքների արտադրության և առևտրի զարգացումն, իր հերթին, հանգեցնում է դրամաշրջանառության և դրամային տնտեսության զարգացմանը: Հայաստանում սեփական դրամն սկսել է հատվել դեռևս մ.թ.ա. 5-րդ դարում՝ ոսկյա, արծաթյա և պղնձյա օրինակներով: Սակայն այդ ժամանակաշրջանում փողն ավելի շատ հարկ վճարելու միջոց էր:

Հետաքրքիր է, որ տնտեսավարման արդյունքն բաժանվում էր երկու մասի. մի մասն ուղղվում էր դրա վերարտադրմանը, իսկ մյուսը, որպես հավելյալ արդյունք, դաժյալ տրոհվելով երկու մասի, ուղղվում էր համայնքային ծախսերի փոխհատուցմանը և կոնկրետ սեփականատիրոջ եկամուտների համալրմանը:

Բացի հայկական դրամներից Հայաստանում շրջանառության մեջ են եղել նաև հռոմեական, պարսկական և այլ երկրների դրամները: Սա մեկ անգամ ևս վկայում է դեռևս ստրկատիրության շրջանում հարևան երկրների հետ Հա-

2. Манандян Я.А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. До н.э.- XVв. н.э.), изд. 2-е, Ереван, 1954, с. 131:
 3. Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, ԱՍԱՍ, 2003 թ., էջ 21:
 4. Манандян Я.А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. До н.э.- XVв. н.э.), изд. 2-е, Ереван, 1954, с. 70-71:

յաստանի ունեցած ակտիվ առևտրական կապերի մասին:

Հայաստանում առևտուրն առավել բարձր մակարդակի է հասնում Բագրատունյաց թագավորության օրոք (9-11-րդ դարեր): Այդ ժամանակաշրջանում վաճառականության նշանավոր կենտրոններ են դառնում Դվինը, Արծնը, Բաղեշը, Կարսը և այլն⁴: Առևտուրը և վաճառականությունն անկում ապրելով Սելջուկյան արշավանքներից հետո, վերստին աշխուժանում է Ջաքարյանների օրոք (13-րդ դարի սկիզբ), երբ հայ վաճառականությունը սերտորեն կապվում է միջերկրածովյան առևտրական կենտրոնների հետ: Միջերկրածովյան առևտրին աշխույժ մասնակցություն է ունենում Կիլիկիայի հայ վաճառականությունը: 13 դարի 2-րդ կեսին և 14-րդ դարի սկզբին, տարանցիկ առևտրական ուղիների փոփոխության կապակցությամբ, Հայաստանի առևտրում առաջնությունն անցնում է Արճեշի, Մանազկերտի և Խլաթի հայ վաճառականությանը⁵: 15-18-րդ դարերում Հայաստանի տարածքում տեղի ունեցած թուրք-իրանական ընդհարումների, այնուհետև՝ ջալալիների ապստամբությունների հետևանքով վաճառականության զարգացումը որոշակիորեն արգելակվելով, այնուամենայնիվ, շարունակում է կատարել Արևմուտքի և Արևելքի միջև տարանցիկ առևտրում միջնորդի իր ավանդական դերը: Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի առևտրային խոշոր կենտրոնների զգալի մասը շարունակում էր գտնվել հայ վաճառականության ձեռքին:

Հայերը կարևոր դեր էին կատարում թանկարժեք քարերի միջազգային առևտրում. այդ քարերը ձեռք բերելով Իրանում՝ վաճառում էին Եվրոպայում: Էրզրումի հայ վաճառականները Ֆրանսիա, Անգլիա, Հոլանդիա էին առաքում այծի նուրբ բուրդ (դվթիկ), Իրան՝ պղնձե ամանեղեն, Մոսկվա՝ ջրային կենդանիների հազվագյուտ մորթիներ, իսկ Ռուսաստանից ներմուծում էին երկաթ, Արևմտյան Եվրոպայից՝ արդյունաբերական ապրանքներ և այլն: 19-րդ դարում հայ վաճառականության խոշոր կենտրոններ էին մնացել Ձմյուռնիան, Սեբաստիան, Կեսարիան, Դիարբեքիրը, Տրապիզոնը, Վանը, Մարաշը, Հաճընը, Ադանան և այլն: Հնդկաստանի հայ վաճառականության կարևոր հանգրվաններ են եղել Մադրասը, Կալկաթան, Բոմբեյը և այլն: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում հայ վաճառականները հաստատվում են Լիվոռնոյում, Մարսելում, Մանչեստրում, Հոլանդիայում, Իտալիայում, Ամերիկայում և այլուր: Հայ վաճառականության հին օրրաններից էր Դրինը, որի տարանցիկ առևտրում 14-18-րդ դարերում նրանք զբաղեցրել են առաջատար դիրք: Ռուսաստանի հայ վաճառականները մշտապես օգտվել են լուրջ արտոնություններից: 17-րդ դարում Աստրախանում բնակվող հայերը կարևոր դեր են ունեցել Ռուսաստանով ընթացող տարանցիկ առևտրում, մասնավորապես ռուս-իրանական առևտրային հարաբերություններում: Ռուսաստանի հետ սերտորեն համագործակցել է Երևանի հայկական առևտրային ընկերությունը: Հայ վաճառականությունը կարևոր դեր է կատարել նաև ռուս-թուրքական առևտրում:

Դրինի հայերը Թուրքիայից ներմուծել են սուրճ, մերձարևադարձային պտուղներ, ձեթ, մեղրամոմ և արտահանել՝ հացահատիկ, բուրդ, կաշի, կոմիճոր և այլն⁶:

Ռուսաստանի հետ ակտիվ առևտրային կապերի մեջ են եղել նաև Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայ վաճառականները: Ռուս-թուրքական առևտրային մրցակցության պայմաններում՝ զանազան արտոնություններ շնորհելու միջոցով, Պետրոս Մեծն աշխատել է ձեռք բերել Թուրքիայի հայ վաճառականության աջակցությունը: 1717 թվականին Ռուսաստանում արտոնյալ պայմաններով հաստատվելու հրավեր են ստանում Ձմյուռնիայի հարուստ վաճառականներ Պետրոս, Աբրահամ, Ստեփան, Ապրո եղբայրները: 18-րդ դարի 2-րդ կեսին Ռուսաստանի հայ վաճառականներից շատերը (Շերիման, Շիրվանով, Մանուիլով, Խասսատով, Բունիաթովներ, Լազարյաններ և այլն) իրենց կապիտալը ներդրել են արդյունաբերական ձեռնարկություններում (մանուֆակտուրաներում)⁷: Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց արագացել է նաև տեղի հայ վաճառականության մի մասի քայքայումը և մյուսի վերածումը առևտրական բուրժուազիայի:

Հայ վաճառականությունը, որպես խավ, Ռուսաստանում վերացել է Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո:

Տնտեսական ակտիվությունը Արևելյան Հայաստանում

Հայ ժողովուրդը տնտեսական ակտիվության նոր փուլ է մտնում 19-րդ դարի սկզբներին՝ պայմանավորված Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից հայ ազգաբնակչության զանգվածային ներգաղթով:

Այն պայմանավորված էր հայ ժողովրդի պարսկական տիրապետությունից ազատագրմամբ ու Ռուսաստանին միացմամբ, և Արևելյան Հայաստանի՝ որպես հայության համահավաք կենտրոնի ձևավորմամբ:

Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Խաղողագործության, պտղաբուծության, ծխախոտի, բամբակի, բրնձի, քունջութի, վուշի, գարու, ցորենի, ինչպես նաև բանջարաբուստանային մշակաբույսերի հողատարածքները այդ ժամանակաշրջանում աճեմ են ավելի քան 2.5 անգամ, որոնք հիմնականում գտնվում էին Արարատյան դաշտավայրում, մասնավորապես Երևանի և Նախիջևանի գավառներում: Երկրում լայն թափով զարգանում է նաև շերամապահությունը՝ դառնալով մետաքսի բարձրորակ հումքի լուրջ աղբյուր: Ջարգանում էր նաև անասնապահությունը: Աստիճանաբար սկսում է զարգանալ գյուղատնտեսական ապրանքների վերամշակման արտադրությունը: 19-րդ դարի վերջին գյուղատնտեսության ոլորտում լայնորեն տարածվում են առևտրային հա-

5. Мартиросян А., Мировые пути через Армению и Переднюю Азию по Карте Пейтингера, Ереван, 2003, с. 105-106:

6. Խաչիկյան Շ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18-րդ դարերում, Երևան, 1988, էջ 55, 89, 117:

7. Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, ԱՍԱԿ, 2003 թ., էջ113:

րաբերությունները:

Այդ ժամանակաշրջանում տնտեսական կյանքում սկսում են զարգանալ արհեստները և արդյունաբերությունը. երկրում գործում էին շուրջ 100 արհեստներ, արհեստավորների թիվն անցնում էր 5000-ը, յուրաքանչյուր 20 բնակչից մեկն զբաղվում էր արհեստով: Արհեստներից հատկապես տարածված էին ջուլհակությունը, կաշվի մշակությունը, կոշկակարությունը, դերձակությունը, բրուտագործությունը, դարբնեգործությունը, ոսկերչությունը և այլն: Ակտիվանում է նաև ձիթահանների, ջրաղացների, ներկատների գործունեությունը: Երկրում ստեղծվում են ապակու, թնդանոթածուլական, վառողի և այլ մանուֆակտուրային տիպի ձեռնարկություններ: Ընդերքից արդյունահանվում էր աղ և պղինձ, ինչը հիմնականում դուրս էր գալիս արտաքին շուկա: Հայկական առևտրային կապիտալը նույնպես սկսում է դուրս գալ երկրի սահմաններից՝ ներգրավվելով այլ երկրների արդյունաբերության ոլորտներ: Երևանը, մասամբ նաև Վաղարշապատը և Ալեքսանդրապոլը, դառնում են տնտեսական կյանքի գլխավոր կենտրոններ: Գտնվելով ակտիվ ճանապարհային խաչմերուկում (Թիֆլիսի, Թավրիզի, Կարսի, Էրզրումի, Բայազետի), Երևանը դառնում է կարևոր առևտրային հանգույց:

19-րդ դարի վերջերին հայաստանյան տնտեսական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը բերում են լուրջ փոփոխություններ երկրի հասարակական-տնտեսական կյանքում՝ աստիճանաբար հետ մղելով տնայնագործությունն ու արհեստագործությունը և սկիզբ դնելով արդյունաբերական կապիտալիզմին: Կովկասը, այդ թվում Արևելյան Հայաստանը, դառնում են համաշխարհային առևտրի մասնակիցներ: Սա, առաջին հերթին, ենթադրում էր բարեկարգ ճանապարհներ և ակտիվ հաղորդակցության միջոցներ: Լայն թափով սկսում են զարգանալ երկաթուղային ճանապարհները, ինչն էլ նպաստում է երկրի՝ Եվրասիային կապող տարանցիկ ճանապարհային հանգույց դառնալուն: Արտադրությունն սկսում է զարգանալ ավելի թափով, հիմնադրվում են ֆաբրիկաներ և գործարաններ: Մեծ ծավալով օտարերկրյա կապիտալ է ներհոսում մեր երկիր, մասնավոր լեռնարդյունաբերության ոլորտ: Պղնձարդյունաբերության ոլորտում ակտիվ էին հույները, իսկ հետագայում՝ նաև ֆրանսիացիները: Հայաստանը պղնձի արտադրությամբ ռուսական կայսրության մեջ զբաղեցնում էր երկրորդ տեղը: Ջարգանում է նաև վերամշակման արտադրությունը, մասնավորապես, բամբակագործությունը, շերամապահությունը ու մետաքսաթելերի արտադրությունը, կաշեգործությունը և այլն: Այսպիսով, կապիտալիստական հարաբերություններն աստիճանաբար ներթափանցում են Արևելյան Հայաստան:

Հայ բուրժուազիան, այնուամենայնիվ, հզորանում է Բաքվում և Թիֆլիսում: Բաքվում արտադրված նավթի 40%-ը պատկանում էր հայերին: Թիֆլիսի թեթև ու սննդի ձեռնարկությունների հիմնական սեփականատերերը

նույնպես հայերն էին: Հայաստանում հայ կապիտալիստները հիմնականում ներգրավված էին պղնձի, գինու-կոնյակի, կաշվի ոլորտներում⁸:

20-րդ դարի սկզբներին Հայաստանում տեղի է ունենում արտադրության կենտրոնացում ձևավորելով մոնոպոլիստական կապիտալիզմ: Արդյունքում վերելք է ապրում լեռնահանքային արդյունաբերությունը: Արագ տեմպերով աճում է պղնձի արտադրությունը: Անդրկովկասում արտադրվող պղնձի 58.2%, իսկ Ռուսաստանի՝ 23.4% բաժին էր ընկնում Հայաստանին⁹: Հանքարդյունաբերության մյուս կարևոր ճյուղի՝ աղի արտադրությունը նույնպես աճում է այդ շրջանում, ինչը սակայն սահմանափակվում է՝ պայմանավորված ռուսական աղի Անդրկովկաս մուտքով: Այդ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում լայն թափ է ստանում սպիրտային խմիչքների (կոնյակի, գինու, օղու) արտադրությունը. այն համարյա քառապատկվում է՝ արտահանվելով հիմնականում Ռուսաստան: Հետաքրքիր զարգացում է ապրում նաև կաթի վերամշակման արդյունաբերությունը, մասնավորապես, պանրագործությունը, ինչը հինգ տարում աճում է մոտ 4-5 անգամ: Այս ոլորտում հիմնականում ներգրավված էին օտարերկրյա ներդրողները (46.5%-ը՝ եվրոպացիներ, 31.5%-ը՝ ռուսներ, 5.4%-ը՝ հայեր)¹⁰: Արտադրվում էին տեղական, շվեյցարական և հոլանդական պանիրներ, որոնք արտահանվում էին Ռուսաստան: Դրական տեղաշարժեր են արձանագրվում նաև գյուղմթերքների պահածոյացման, բամբակագտիչ արդյունաբերության, մետաքսագործության, գորգագործության ոլորտներում, որոնց արտադրանքը նույնպես արտահանվում էր՝ Ռուսաստան, Լեհաստան, Իտալիա Ֆրանսիա և այլն: Գործում էին նաև հանքային ջրերի, աղյուսի, գաջի, փայտամշակման ձեռնարկություններ:

Չնայած ակնհայտ առաջընթացին, խոշոր արդյունաբերությունը երկրում թույլ էր զարգացած: Չէին պահպանվում նաև մանր ու միջին արտադրությունների զարգացման տեմպերը՝ պայմանավորված ցարական Ռուսաստանի կողմից սահմանված հարկային ծանր բեռով: Առաջին համաշխարհային պատերազմն էլ, իր հերթին, ամբողջությամբ քայքայում է Արևելյան Հայաստանի տնտեսությունը:

Աշխատունակ բնակչության հիմնական մասը զորակոչվում է բանակ, պատերազմական կարիքների համար բռնագրավվում են ձիերը, անասունները և այլն: Տեղի է ունենում տնտեսության ռազմականացում. արդյունաբերությունը, հատկապես պղնձարդյունաբերությունն ամբողջությամբ ծառայում էր ռազմական նպատակներին: Տեղական արտադրողները չդիմանալով մրցակցությանը, կույ են գնում օտարերազմիցներին: Նվազում են ազգաբնակչության եկամուտները, բարձրանում են պարենային ապրանքների գները: Վիճակն էլ ավելի է վատանում՝ պայմանավորված տնտեսական շրջափակմամբ, սովով և համաճարակներով:

8. Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, ԱԱԱ, 2003 թ., էջ 117, 131:

9. Անանյան Լ. Ջ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, ռուսումնական ձեռնարկ, Երևան, ԱԱԱ, 2003, էջ 139:

10. Անանյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, ԱԱԱ, 2003 թ., էջ 21

Նման իրավիճակում ձևավորված Հայաստանի առաջին հանրապետության տնտեսական քաղաքականությունն ուղղվում է տնտեսության վերականգնմանը: Ծայրահեղ սուղ բյուջեի մուտքերը հիմնականում ապահովվում էին ակցիզային հարկերի և մաքսավճարների հաշվին: Թողարկվում է ազգային դրամը, ինչը հանգեցնում է ռուբլու կուրսի անկմանը: Հիմնադրվում են պետական բանկեր:

Տնտեսական ակտիվությունը վարչահրամայական համակարգում

Չնայած, որոշ դրական տեղաշարժերին, Հայաստանի երկրորդ հանրապետությունից պահանջվում են հսկայական ջանքեր՝ երկրի վերականգնման ու վերակառուցման համար: Պետական քաղաքականությունն առաջնահերթ ուղղվում է կրթության, առողջապահության ոլորտներին: Իրականացվում են մի շարք տնտեսական և սոցիալական վերափոխումներ: Ազգայնացվում են հողը, հանքերը, անտառները, գետերը և այլն: Համալիր միջոցներ են ուղղվում գյուղատնտեսության զարգացմանը, այնուհետև՝ մանր ու թեթև արդյունաբերությանը, և այդ ամենի հիման վրա՝ խոշոր արդյունաբերության վերականգնմանը:

Վերականգնվում են հին ջրանցքները, կառուցվում՝ նորերը: Ներդրվում է նոր գյուղատնտեսական տեխնիկա, ստեղծվում են գյուղտեխնիկայի վարձակալաններ: Ընդլայնվում են ցանքատարածությունները, ավելանում է բուսաբուծության և անասնապահության համախառն արտադրանքը: Աճում են շինաշխատանքների ծավալները: Լայնածավալ ներդրումներ են կատարվում էլեկտրաէներգետիկայում, տեքստիլում և պղնձի արդյունաբերությունում: Վերականգնվում և զարգանում է պղնձի և սպիրտային խմիչքների արտադրությունը: Ստեղծվում է նաև տեքստիլ արդյունաբերությունը: Ավելի մեծ տեմպերով են զարգանում բամբակագործիչ, կաշվի վերամշակման, փայտամշակման, մեքենաշինության և պոլիգրաֆ ոլորտները: Երկաթուղու և հաղորդակցության ոլորտները նույնպես վերականգնվում և արդիականացվում են: Մեծանում են ուղևորա- և բեռնափոխադրումների ծավալները: Նման համալիր և հետևողական միջոցառումների արդյունքում երկրում ընդլայնվում է առևտուրը:

Նոր տնտեսական քաղաքականության ներքո լայնածավալ վերականգնողական աշխատանքներին անմիջապես հաջորդում են երկրի վերակառուցմանն ու ինդուստրիալիզացմանն ուղղված միջոցառումները: Առաջընթացն ակնառու էր էներգետիկայի ոլորտում: Լայն թափով զարգանում է նաև հիդրոէլեկտրաէներգիայի: Երկրում լայնորեն զարգանում են գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը և այլն: Գյուղը նույնպես անընդհատ ենթարկվում է վերափոխումների: Գյուղի ինդուստրիալիզացիայի արդյունքում բարձրանում է ոլորտի արտադրողականությունը: Անընդհատ տեղի էր ունենում տնտեսության տեխնիկական վերակառուցում: Հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսության ինդուստրիալացումը ստանալով նոր որակ, հանգեցնում է առաջընթացի: Սովետական տնտեսության

աճն, այնուամենայնիվ, առավելապես կրում էր էքստենսիվ բնույթ:

Վարչահրամայական համակարգին բնորոշ էր հավելյալ արտադրանքի հիմնական մասի կենտրոնացումը, քաղաքացիների հիմնական մասի անձնական ծախսերի միմիանալացումը, տնտեսական պահվածքի կոշտ կարգավորումը, գների և արտադրության ծավալների պլանավորումը և այլն: Այս ամենը հանգեցրել էր արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների աղճատման: Այսպիսի համակարգը հետ էր պահում աշխատողներին ինքնուրույն գործելու և ռիսկի դիմելու նախաձեռնությունից, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացներից, քայլերի հնարավոր հետևանքների կանխատեսումից և այլն:

Ձեռնարկատիրությունը վարչահրամայական տնտեսական համակարգից շուկայականի անցման փուլում

Շուկայական տնտեսության հիմնական առանձնահատկությունը ոչ թե պլանավորումից հրաժարման և ապրանքարամային հարաբերությունների անցման մեջ է, այլ արտադրության և սպառման կապերի ձևերի փոփոխության, արտադրողների և սպառողների միջև անմիջական կապի ձևավորման, ուղղահայաց կառավարման ձևից հորիզոնականին անցման մեջ և այլն:

Ընդունելով, որ տնտեսության համակարգային փոփոխությունը բավական բարդ գործընթաց է, պարզամիտ է մտածել, որ միայն մակրոտնտեսական փոփոխությունները՝ սեփականաշնորհումը, գների ազատականացումը, առևտրի ազատությունը և այլն կնպաստեն երկրի զարգացման ուղեծիր դուրս գալուն:

Շուկային անցման գործընթացն էլ ավելի է բարդացել աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գլոբալ զարգացումների ներքո տեղ գտած գնային, մրցակցային և ինստիտուցիոնալ «շոկերով», որոնց պայմաններում ի հայտ են եկել կապիտալի շրջանառության նոր կանոններ և հնարավորություններ: Չնայած արևմտյան երկրները նույնպես ստիպված են հարմարվել նոր պայմաններին, այնուամենայնիվ անցումային երկրների, մասնավորապես Հայաստանի՝ նոր պայմաններին հարմարվելու գործընթացը շատ ավելի դժվար է: Այն էլ ավելի է բարդացել «ինացության շոկի» և շուկայական տնտեսության արդի տրամաբանությանը հարմարվելու հրամայականի պայմաններում: Շուկայական տնտեսությանն անցման գլխավոր խնդիրն այսօր ավելի շատ կապված է տնտեսական մտածելակերպի փոփոխության, տնտեսական ազատության զարգացման, նախաձեռնության և պատասխանատվության հետ:

Չկենտրոնանալով տնտեսական ակտիվության և ձեռնարկատիրական գործունեության ոլորտային և ճյուղային կառուցվածքային զարգացումների վրա, փորձենք ավելի հանգամանակից անդրադառնալ Հայաստանում կատարվող վերափոխումների սոցիալ-մշակութային և բարոյա-հոգեբանական խնդիրներին:

(շարունակությունը՝ էջ 59-ում)

Տնտեսական ակտիվության ժամանակագրական դրսևորումները. էթնո-հայեցակարգային առանձնահատկու- թյուններն այդ համատեքստում

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
տ.գ.թ., պրոֆեսոր



Յուրաքանչյուր ազգ հպարտանում է տնտեսական ակտիվության իր արդյունքներով, իսկ ազգի յուրաքանչյուր ներկայացուցիչ՝ դրանց արարմանը իր մասնակցությամբ: Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ զարմացրել է արարելու իր բազում շնորհներով և արարողի բարձր որակներով (նախածեռնողականություն, պատասխանատվություն, ազնվություն և այլն), և լինելով փառավոր ավանդույթների կրողն ու ժառանգորդը, այսօր, հայտնվելով փնտրտուքի բարդ խաչուղուն, դանդաղում է, ի հեճուկս զարգացման արդի հրամայականի: Պատճառները ոչ այնքան արտաքին կան ներքին են, ոչ այնքան՝ տնտեսական, որքան՝ աշխարհայացքային և արժեհամակարգային: Սա էլ հենց թույլ չի տալիս բարձրացնել մեր երկրի տնտեսական կենսուժը և անցում կատարել հասարակական-տնտեսական զարգացման մայրուղի:

Տնտեսական ակտիվությունը բավական բարդ և բազմաշերտ գործընթաց է: Այս առումով երկրի առաջընթաց զարգացումը զուտ տնտեսական գործոններով պայմանավորելը պարզունակ է և ոչ համոզիչ: Ավելին, տնտեսական ակտիվությունը, մասնավորապես ձեռնարկատիրական գործունեությունը, նախ և առաջ, անհատականության զարգացման ու դրսևորման, նրա ունակությունների ու պահանջներների ընդլայնման անընդհատ գործընթաց է: Այն

նաև հասարակության բնականոն զարգացման շարունակական գործընթաց է, ինչը հայ իրականության մեջ մշտապես ուղեկցվելով տնտեսական ազատության ձգտումով այսօր դարձել է հասարակական կարևոր սոցիալական պահանջ: Միաժամանակ, տնտեսական ու սոցիալական ազատությունը և արդարությունը, և դրանց հետ անմիջականորեն փոխառնչվող նախածեռնողականությունը և պատասխանատվությունը՝ պայմանավորված մարդկանց կարողությունների և հմտությունների տարբերությամբ, մշտապես հանգեցրել են ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական բավական բարդ միջավայրի ձևավորմանը: Սա էլ, իր հերթին, հանգեցնելով տնտեսական ակտիվության նկատմամբ մարդու, հասարակության անընդհատ փոփոխվող՝ ոչ միանշանակ վերաբերմունքի, նպաստել կամ խոչընդոտել է տնտեսական ակտիվության ծավալմանը:

Ամենևին չթերագնահատելով տնտեսական բարեփոխումների դերը՝ որպես զարգացման անհրաժեշտ պայման, այնուամենայնիվ, պետք է ասել, որ դրանք բավարար չեն՝ տնտեսական գործոնների նպատակային կյանքի կոչման ու առավելագույն արդյունավետ իրացման համար: Այստեղ շատ ավելի առաջնային են ազատության ու մրցակցության, ինչպես նաև բավարար նախածեռնողականության ու անհրաժեշտ պատասխանատվության զարգացման, և, հե-

տևաբար, ժամանակի պահանջներից բխող մտածողության արագ ու ճկուն փոխակերպման (տրանսֆորմացիոն) խնդիրները:

Ցավոք, մեր երկրում այսօր դժվարությամբ է ձևավորվում քաղաքակիրթ ձեռներեցական մթնոլորտ, և, որ ավելի վատ է, չի խրախուսվում այդպիսին ստեղծելու ձգտումը: Սա պայմանավորված է ավելի խորքային խնդիրներով, մասնավորապես հայ հասարակության մոտ ձևավորված ոչ բարենպաստ բարոյա-հոգեբանական մթնոլորտով և հասարակական գործունեության աշխարհայացքային բովանդակությամբ: Մինչդեռ մենք ունենք դարերի խորքից փոխանցված լուրջ նախադրյալներ՝ քաղաքակիրթ լինելու ու աշխարհի հետ «աշխարհի լեզվով» խոսելու համար: Ընդունելով, որ ժամանակը փոխվում է իր հետ բերելով նոր չափորոշիչներ ու արժեքներ, նոր պայմաններ ու մոտեցումներ, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ մեր նախաձեռնությունները կհաջողվեն, եթե խարսխված լինեն հայ մարդու էթնո-բարոյական կերպարի և հայ ժողովրդի վայրէջքների և վերելքների դարերի փորձով կուտակված ձեռքբերումների վրա:

Տնտեսական ակտիվության ժամանակագրական առանձնահատկությունները և հայեցակարգային ուղենիշերը

Տնտեսական ակտիվությունը բավական բարդ և դինամիկ գործընթաց է: Չնայած տնտեսական ակտիվության վերաբերյալ իրականացված բազմաթիվ ուսումնասիրություններին, այնուամենայնիվ, դեռևս գոյություն ունի դրա առավել ամբողջական բնութագիր: Այս հանգամանքը, ակնհայտորեն, խոսում է տվյալ երևույթի բազմաշերտության ու բազմաբովանդակության, և, հետևաբար, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող բազմակարծության մասին: Միանշանակ չի եղել նաև մարդու և ժողովրդի վերաբերմունքը՝ տնտեսական ակտիվության նկատմամբ: Պատճառները բազմաթիվ են և խիստ բազմաբնույթ՝ սոցիալ-տնտեսականից մինչև բարոյա-հոգեբանական:

Տնտեսական ակտիվության նկատմամբ ժողովրդի ոչ բարոյացական վերաբերմունքն արտահայտվել է դեռևս հին աշխարհում: Այն հիմնականում պայմանավորված է եղել մատուցված ծառայությունների և ապրանքների ցածր որակով: Տվյալ երևույթի դեմ հանդես է եկել Բաբելոնի արքա Յամուրաբին: Նա մ.թ.ա. 2100 տարի առաջ կազմել է 300 օրենքներից բաղկացած օրենսգիրք՝ ձեռներեցների և սպառողների իրավունքների պաշտպանության մասին: Անբարյացականության լուրջ թիրախ էր նաև վաճառականությունը, ինչը բացատրվում էր այն հանգամանքով, որ նրանք, ապրանքի որակի բարելավման համար ոչինչ չանելով՝ սահմանում էին ավելի բարձր գներ, քան ապրանք արտադրողները: Եկեղեցին դեմ էր նաև փողը տոկոսով տրամադրելուն: Դեռևս միջին դարերում հռոմեական կաթոլիկ եկեղեցին ասելությանը վերաբերվելով ձեռներեցներին, նրանց համարում էր մեղսունակներ: Տնտեսական ակտիվության նկատմամբ միջնադարյան փիլիսոփաների և եկեղեցականների թշնամական վերաբերմունքը պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակաշրջանում արտադրության գերիշխող ձևը բնատնտեսությունն էր, որի պայմաններում աշխատասեր հողագործի հանգիստ կյանքն ու գործունեությունը համարվում էր մարդկության գոյության ամենաընդունելի ձևը: Միևնույն ժամանակ, ձեռնարկատերը, որը

գտնվում էր մշտական շարժման մեջ և փորձում էր փոխել հաստատված գործելաձևը և կենսաձևը, հայտնվում էր գյուղացիական պահպանողականության հակառակ կողմում:

Չեղարկելով մեկ դասականների վերաբերմունքը տնտեսական ակտիվության նկատմամբ: Ըստ դասական տնտեսության ձեռնարկատերը կարող է հանդես գալ կամ որպես սեփականատեր (Ա. Սմիթ) կամ որպես ներդրող (Դ. Ռիկարդո): Այլ գործառույթներ նրանք չեն դիտարկում: Ուշագրավ են նաև ձեռնարկատիրության վերաբերյալ մարքսիստական հայացքների ելակետային սկզբունքները: Կ. Մարքսը ձեռնարկատիրոջն ընդունում էր որպես կապիտալիստ, որը ներդրելով կապիտալ ստանում է շահույթ՝ վարձու աշխատողների կողմից ստեղծված արդյունքի հաշվին: Ինչպես գրում է Մարքսը. «Կապիտալը վախճանում է շահույթի բացակայությունից կամ չափազանց փոքր շահույթից՝ այնպես, ինչպես բնությունն է վախճանում դատարկությունից: Սակայն, երբ կա բավականաչափ շահույթ, կապիտալը դառնում է համարձակ: Ապահովվեք 10 տոկոսով, և կապիտալը համաձայն է ցանկացած կիրառման, 20 տոկոսի դեպքում նա դառնում է կենսունակ, 50 տոկոսի դեպքում պատրաստ է զլուխը օրոհել, 100 տոկոսի դեպքում նա ուռնահարում է մարդկային օրենքները, 300 տոկոսի դեպքում չկա այնպիսի մի հանցանք, հանուն որի ձիսկի չդիմի, նույնիսկ կախաղանի վտանգի տակ»¹:

Ձեռնարկատիրոջ դերի կարևորությունը տնտեսագետների կողմից ընդունվեց 19-20-րդ դարերում: Ա. Մարշալը արտադրության դասական երեք գործոններին՝ աշխատանք, հող, կապիտալ, ավելացրեց ևս մեկը՝ կազմակերպում: Այս տեսակետից ձեռնարկատիրությանը բավական հետաքրքիր գնահատական է տվել գերմանացի տնտեսագետ Վ. Ջոնքարտը: Ըստ նրա ձեռնարկատերը կազմակերպիչ է՝ շատ մարդկանց մեկ աշխատանքի շուրջ միավորելու կարողությամբ և առևտրական է՝ իր ապրանքը վաճառելու նպատակով մարդկանց մոտ հետաքրքրություն առաջացնելու ու համոզելու, ինչպես նաև մարդկանց վստահությանն արժանանալու կարողությամբ և, ի վերջո, նա նվաճող է՝ իր ձիսկի դիմելու պատրաստակամությամբ, հոգևոր ազատությամբ, գաղափարների հարստությամբ, կամքով և համառությամբ: Ջոնքարտը ձեռնարկատիրոջ նպատակներից առանձնացնում է սեփական գործի բարգավաճման ձգտումը, մասնավորապես, շահույթի աճը, քանի որ առանց դրա հնարավոր չէ զարգացումը: Համաձայն Կանտիլիոնի, ձեռներեցը, եկամուտ ստանալու նպատակով ձիսկն իր վրա վերցնելու ցանկություն և վստահություն ունեցող անհատն է: Իսկ ըստ Ֆ. Հայեկի՝ ձեռնարկատիրական գործունեության համար ամենակարևորը անձնական ազատությունն է, ինչը մարդուն հնարավորություն է տալիս ռացիոնալ կերպով տնօրինելու իր ունակությունները, գիտելիքները, տեղեկատվությունը և եկամուտները²: Ի. Շումպետերը ձեռնարկատիրական գործառույթներին է դասում, օրինակ, նոր տեսակի տեխնիկական և տեխնոլոգիական ներդրումները, նոր ապրանքների ստեղծումը, նոր շուկաների մուտքը, հումքի նոր աղբյուրների գրավումը, գիտական հետազոտությունների, մարքեթինգի և այլնի օգտագործումը: Պ. Սամուելսոնը ձեռնարկատիրությունն անմիջականորեն կապելով նորարարության հետ, գտնում է, որ ձեռնարկատերը յուրօրինակ մտածողությամբ խիզախ մարդ է, ով ի վիճակի է դիմելով ձիսկի՝ հասնել նոր գաղափարների հաջող ներմուծմանը: Վ. Ռոստոուն, ինչպես և նախորդ եղիմակները,

1. Մարքս Կ., Կապիտալ, I հատոր, գիրք 1, թարգմ. ռուսերենից, Հայաստանի պետհրատարակություն, 1954 թ., էջ 139:

2. Sombart Werner, Economic Live in the Modern Age, republished 2001, p. 97.

3. Комаров Е.И. Измерение мотивации и стимулирования «человека работающего». — М.: РИОР: ИНФРА-М, 2010. — С. 119.

որպես տնտեսական աճի գործոն առանձնացնում է մարդկանց հակումը նորարարությանը և նյութական բարելավմանը: Ռ. Արոն գտնում է, որ հետիմդուստրիալ հասարակության հիմնական բաղադրիչները լինելու են գիտությունը և գիտա-տեխնիկական առաջընթացը, կազմակերպչական-տնտեսական նորարարությունը և դրանցով պայմանավորված ռիսկերը: Իսկապես, ձեռնարկատիրական գործունեությունն այսօր տեղի է ունենում արագ փոփոխվող ներքին և արտաքին միջավայրերում, որոշումները կայացվում են բազմաթիվ ենթադրությունների հիման վրա, ինչն էլ հանդիսանում է ռիսկի մեծ աղբյուր: Ասել է թե՛ հնարավոր չէ խուսափել ռիսկից, մասնավաճ, որ շահույթը համարվում է ռիսկի պարգև: Խնդիրն էլ ավելի արդիական է շուկայական բարձր մրցակցության այսօրվա պայմաններում: Դեռ մրցակցությունն է ստիպում, մեծ շահույթ ստանալու ակնկալիքով գնալով ռիսկի՝ բացահայտել և յուրացնել նորարարական գաղափարներ, փնտրել և իրացնում է նոր հնարավորություններ ու ուղղություններ՝ նորանոր համակցությունների միջոցով: Ինչպես ասում է Շումպետերը. «Լինել ձեռներեց՝ նշանակում է չանել այն, ինչ անում են ուրիշները, և չանել այնպես, ինչպես անում են ուրիշները»: Իրագործելով նորարարություններ և ապահովելով տնտեսական աճ՝ ձեռնարկատերը, ըստ Շումպետերի, վեր է ածվում «արարող կործանիչի»: Նա, իրականացնելով նախաձեռնողական տնտեսական գործունեություն և իր վրա վերցնելով մեծ ռիսկեր, վտանգի է ենթարկում ոչ միայն ժամանակը, իր ներդրած աշխատանքը և հեղինակությունը, այլև իր և գործընկերների ներդրած միջոցները⁴:

Ժամանակն անընդհատ փոփոխվում է՝ իր հետ բերելով նոր խնդիրներ և նոր մոտեցումներ: Նման պայմաններում կոյտատևի ոչ թե ամենաուժեղը կամ ամենախելացին, այլ նա՝ ով առավել արագ կկարողանա հարմարվել փոփոխություններին: Ձեռնարկատիրական գործունեության արդի տեսությունը հիմնվում է ժամանակակից հաջողակ գործարարների, մենեջերների և այլ մասնագետների փորձի վրա, ինչպիսիք են Ջիզ Ջիզլարը, Դեյվի Ֆորդը, Լի Յակոկան և այլն: Նրանցից յուրաքանչյուրի գործունեության հիմքում ընկած են որոշակի հիմնարար գաղափարներ, որոնք ամմիջականորեն ընկած են հետևյալ հեռայունների վրա՝ մարդ, ապրանք, եկամուտ: Ըստ կարևորության, առաջնահերթությունը տրվում է մարդուն, քանի որ գործը չի հաջողվի, եթե չլինի ժամանակի պահանջներին արագ և ճկուն արձագանքող թիմ, հուսալի և կամային կառավարիչ, նպատակային և ռիսկի պատրաստ գործարար: Այստեղ շատ ուսանելի է Լի Յակոկայի կարգախոսը. «Դուք ծնվել եք հաղթելու համար, բայց հաղթելու համար դուք պետք է պլանավորեք հաղթել, պատրաստվեք հաղթել և վստահ եղեք ձեր հաղթանակի մեջ»⁵ (մարդու դերի կարևորումը): Պակաս ուսանելի չէ նաև Ջիզ Ջիզլարի փորձը. «Ես անձամբ նախընտրում եմ ելակ սերուցքով, սակայն ձկնորսության գնալիս ես ուշադրությունս կենտրոնացնում եմ ոչ թե նրա վրա, թե ինչ եմ ես նախընտրում, այլ՝ թե ինչ է նախընտրում ձուկը»⁶ (ապրանքի գործոնի կարևորումը):

20-րդ դարի վերջին շատ երկրներ հասան քաղաքակիրթ հասարակության ձևավորման և զարգացման այնպիսի մակարդակի, որում առաջանում են համագործակցության և առողջ մրցակցության վրա հիմնված շփման նոր ձևեր: Այսօր ցանկացած կայացած կազմակերպություն իր առաջնային պարտականությունն է համարում գործել արդյունավետ

և ներդրում ունենալ երկրի հասարակական-տնտեսական բարեկեցության ապահովման գործում: Գոյություն ունեն բիզնեսի սոցիալական պատասխանատվության տարբեր դրսևորումներ՝ սկսած ամենապարզ բարեգործությունից մինչև միջոցառումների բավական լայն շրջանակ (ներքին խնդիրների կարգավորումից մինչև ակտիվ սոցիալական գործողություններ): Բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը շաղկապվում է նաև ավելի բարձր շահութաբերության և մրցունակության, ինչպես նաև ընկերության հեղինակության ամրապնդման հետ:

Ժամանակակից մասնագիտական գրականությունում շարունակվում են ձեռնարկատիրական գործունեության որպես տնտեսության զարգացման կարևոր գործոնի, կարևորության վերաբերյալ գնահատականները: Այնուամենայնիվ, ձեռնարկատիրական գործունեության տարաբնույթ դրսևորումների, ուղենիշային հենքերի ու չափորոշիչների, գործոնային առաջնահերթությունների, ինչպես նաև մոտեցումների անընդհատ փոփոխությունների ներքո հնարավոր չէ սպառիչ ներկայացնել ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները և տալ առավել ամբողջական բնորոշում: Այստեղ շատ հետաքրքիր և, բիզնեսի առողջ տրամաբանության տեսակետից, բավական ուսանելի կարող է լինել մեղուների կենսակերպը՝ որպես ձեռնարկատիրական գործունեության առավել ամբողջական նկարագիր և ցանկացած նախաձեռնության հաջողության գրավական:

Ձեռնարկատիրական գործունեության բոլոր ժամանակների ամենարդիական մոդելը. մեղուները մեզ օրինակ

Բիզնեսի բուն էությունը ճիշտ հասկանալու և առավել նպատակային գործելու համար ուղղակի պետք է ուշադիր հետևել բնությանը: Մեղուների գործունեությունը ցանկացածիս համար կարող է դառնալ լավագույն բիզնես մոդելը:

Տվյալ դեպքում մեղր արտադրելու միտքը բիզնես գաղափարն է, ինչի համար ստեղծվում է մեղուների թիմ: Բնության մեջ ամենաթիմային աշխատողները մեղուներն են: Նրանք գործում են խիստ կանոնակարգված: Փեթակում (կազմակերպություն) առկա է հստակ կազմակերպչական ձև և հիերարխիկ կարգապահություն՝ յուրաքանչյուրն զբաղվում է իր գործով (աշխատանքի բաժանում): Փեթակի ղեկին կանգնած է մայր մեղուն (մենեջերը), ով ապահովում է մեղուների պարսի արդյունավետ գործունեությունը և փեթակի կենսունակությունը: Եթե մայր մեղուն լքում է փեթակը՝ պարսը հետևում է նրան: Միաժամանակ, եթե պարսը դժգոհ է լինում մայր մեղվից, մեղուները գործում են ցանց՝ որում մեծանում է նոր մայր մեղուն:

Մեղուները միշտ գործում են՝ ելնելով երկարաժամկետ նպատակներից. նեկտար (ռեսուրսներ) հայթայթելու ժամանակ նրանք երբեք չեն վերցնում ամբողջ նեկտարը, այլ որոշ մասը թողնում են հաջորդ տարվա համար: Մեղուները փեթակը կառուցում են բազմաթիվ վեցանկյուններից, ինչն ապահովում է տարածքի և մեղրամոմի նվազագույն օգտագործմամբ՝ առավելագույն քանակությամբ մեղրի ստացում (ծախսերի և շահույթի օպտիմիզացիա): Մեղուները ակտիվ արձագանքում են շրջակա միջավայրի փոփոխություններին (ճկունություն), փնտրում նոր ծաղիկներ նեկտարի համար (իննովագիա) և գտնվում են անընդհատ ուսուցման

4. Шумпетер И. “Теория экономического развития”. М., Прогрес, 1982 г., стр. 116

5. Ли Якокка, Карьера менеджера, Киев, Экономическая библиотека, 2000.

6. Zig Ziglar, 10 Quotes That Can Change Your Life. www. Forbes.com

գործընթացի մեջ՝ ավելի փորձառու մեղուների կողմից (մենթորության և անընդհատ սովորելու կարևորությունը): Մեղուները շատ բարձր պատասխանատվությամբ են մոտենում իրենց առջև դրված առաջադրանքին. երբեք չեն վերադառնում փեթակ՝ այն չկատարած:

Այս գործընթացում տեղի է ունենում մի կարևոր գործառույթ և՛ փոշոտում (բիզնեսի սոցիալական պատասխանատվությունը): Բիզնեսի կազմակերպման և կառավարման նման գործընթացը՝ որպես կանոն, ավարտվում է նոր արժեքի ստեղծմամբ, որտեղ շահառուներ են դառնում և՛ գործարարը, և՛ հասարակությունը, և՛ բնությունը: Ինչպիսի ներդաշնակություն:

Իսկ ինչպիսի՞ն են ձեռնակատիրական գործունեության շահառուների փոխհարաբերություններն իրական կյանքում: Որքանով են դրանք ներդաշնակ կամ հակասական: Փորձենք դա հասկանալ ձեռնարկատիրական գործունեության զարգացման բավական խոսուն հայեցակարգային դասակարգման ներքո:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման հայեցակարգային ուղենիշերը

Ելնելով ժամանակագրական, տարածքային, ազգային և այլ առանձնահատկությունները, առանձնանում են ձեռնարկատիրական գործունեության զարգացման հետևյալ հայեցակարգային խմբերը՝ պոզիտիվ, կրիտիկական, պրագմատիկ:

Պոզիտիվ հայեցակարգի ներքո ձեռնարկատիրական գործունեությունն ընկալվում է որպես սեփական նախաձեռնությամբ իրականացվող հանրօգուտ գործունեություն, որի նպատակն այլ մարդկանց համար ծառայությունների և ապրանքների արտադրությունն է, այսինքն, հասարակական պահանջմունքների բավարարումը: Այսպիսի մոտեցումն առավելապես ընդունված է ամերիկյան միջավայրում:

Կրիտիկական հայեցակարգը հիմնված է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների ստացման և շահույթի նպատակ հետապնդման հատկանիշի վրա: Հանուն եկամտի գործարարը պատրաստ է դրսևորել վարքագծի զանազան ընդունելի և ոչ ընդունելի ձևեր: Հիշենք Կ. Մարքսի վերը հիշատակված բնութագիրը: Համաձայն այս հայեցակարգի ձեռնարկատիրական գործունեությունը կենտրոնացած է մարդկանց մի մասի կողմից իրենց շահադիտական հետաքրքրությունները մյուսներին պարտադրելու վրա: Ձեռնարկատիրական գործունեությունը ծայրահեղ հակասող երևույթ է, որը ունակ է ստեղծել և ստեղծում է հասարակության մեջ զանազան կոնֆլիկտներ: Ձեռնարկատիրական գործունեությունը մարդկային կյանքի անցանկալի բաղադրիչն է, կրիմինոգեն գործընթացների ստեղծողը: Ձեռնարկատիրական գործունեությունը պատմականորեն փոխանցվող երևույթ է, որը հեռանկարում պետք է իր տեղը գիշի տնտեսության զարգացման մյուս ոչ հակասական և ոչ կոնֆլիկտային ձևերին:

Պրագմատիկ հայեցակարգի ելությունն այն է, որ ձեռնարկատիրական գործունեությունը դիտարկվում է որպես հասարակական զարգացման անխուսափելի գործոն: Այն կարևոր է ինչպես գործարարների համար, որոնք ունեն շահադիտական նպատակներ, այնպես էլ հասարակության

Բիզնեսի հայեցակարգերի հիմնական բնութագրիչները

Հայեցակարգեր	պոզիտիվ	կրիտիկական	Պրագմատիկ
Բիզնեսի նպատակը	հասարակական բարեկեցություն	գործարարի շահ	հասարակական պահանջմունքների բավարարում
Շահառուները	հասարակությունը	գործարարը	և՛ գործարարը, և՛ հասարակությունը
Երևույթը	ոչ հակասական	ոչ ցանկալի հասարակական կյանքում	Հակասական



մյուս անդամների համար, որոնք ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ հնարավորություն են ստանում բավարարել իրենց պահանջմունքները: Տվյալ մոտեցման պրագմատիկությունը պայմանավորված է նրանով, որ ձեռնարկատիրական գործունեության հակասողականության ընկալումը որպես տնտեսական երևույթ չի առնչվում այդ հակասությունների իրավական, տնտեսական և բարոյական արժանատիքին:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման հայեցակարգերի ներքո սերտ փոխկապվածության մեջ են հանդես գալիս առանձին անհատների եկամուտ ստանալու ձգտումը և հասարակական պահանջմունքների բավարարումը՝ ոչ միշտ դրսևորելով միանշանակ վարքագիծ: Սա նշանակում է, որ ձեռնարկատիրական գործունեությունը հակասող երևույթ է: Եվ, չնայած այն կարող է տարատեսակ հակասությունների պատճառ դառնալ, այնուամենայնիվ, տնտեսական զարգացման շարժիչ ուժ է և հասարակական կյանքի անխուսափելի բաղադրիչ:

Ձեռնարկատիրական գործունեության զարգացման հայեցակարգային ո՞ր հատկանիշներն են որոշիչ Հայաստանում, որո՞նք են զարգացում ապահովող հայեցակարգային ուղենիշերը և ինչպիսի՞ն են դրանց ժամանակագրական դրսևորումները և, ի վերջո ինչպիսի՞ն է հայ մարդու, հայ ժողովրդի, հայ գործարարի, հայ հասարակության ներդրումը հասարակական-տնտեսական առաջընթացում:

Փորձենք լինել առավել հանգամանալից:

Տնտեսական ակտիվության էթոն-հայեցակարգային հենքերը. Խթան, թե՞ խոչընդոտ

Հայ ժողովրդի պատմությունը ձեռքբերումների և կորուստների, առաջընթացի և հետընթացի անընդհատ վայրիվերումների ժամանակագրություն է:

Բարձր զնահատելով Հայաստանի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ՝ Դ.Ս. Լանգն իր «Հայաստանը քաղաքակրթության բնօրրան» գրքում գրել է. «Հին երկիր Հայաստանը գտնվում է բարձր լեռներում...Թեպետ սովորաբար, Միջագետքն՝ իր Շումերի և Բաբելոնի

հին քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ միասին, ժամանակակից իմաստով, դիտվում է որպես քաղաքակրթության գլխավոր աղբյուր, Հայաստանը նույնպես իրավունք ունի համարվելու քաղաքակրթության և մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը...»⁷:

Եռանդուն և աշխատասեր հայ վաճառականների համբավը վաղնջական ժամանակներից հայտնի էր ոչ միայն ողջ Ասիայում և Եվրոպայում: Հին աշխարհի հայտնի մտածողներ Քսենոփոնը, Հերոդոտոսը, Ստրաբոնը և Պլինիոսը գովեստով պատմում են, որ հայերը վաճառականություն են անում Պարսկաստանի, Բաբելոնի, Հնդկաստանի, Հունաստանի և Իտալիայի հետ: Իսկ ավելի ուշ Հնդկաստանի եվրոպական վաճառականության պատմության գիտակ Ռայնալը հայերին կոչում է «Տեր կան ուսուցիչ Ասիայի ներքին վաճառականության... դրամատեր, միանգամայն վերջին աստիճանի ժուժկալ ու խնայող, դաշնակից պարսիկների և հնդիկների, մանրագնին քննող և ընդարձակամիտ»⁸:

Ուզմավարական կարևոր դիրքով և քաղաքակրթական զարգացումներով Հայաստանը դեռևս հին ժամանակներից աչքի է ընկել տնտեսական ակտիվության իր առանձնահատուկ դրսևորումներով: Սա էլ հենց հսկայական դեր է կատարել ոչ միայն հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում, այլև՝ համաշխարհային առևտրի պատմության մեջ: Առանձնապես կարևոր էր Հայաստանի բարենպաստ դիրքը համաշխարհային առևտրի ոլորտում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանով էին անցնում ռազմավարական «Մետաքսի» և «Արքայական» կոչվող մեծ ճանապարհները: Տիրապետում էին հսկողության տակ վերցնելով Մետաքսի ճանապարհի՝ Հնդկաստանի սահմաններից մինչև Միջերկրական ծովի առափնյա Դաշտային Կիլիկիայի, Սիրիայի և Փյունիկիայի առևտրային մեծ նշանակություն ունեցող նավահանգիստները հասնող ուղիները, իր գործունեությունը տարածվեց Հայոց տերության մեջ մտած Առաջավոր Ասիայի մեծագույն մասի վրա⁹: Վաղ միջնադարից վերելք ապրեցին Հայաստանով անցնող Մետաքսի ճանապարհի վրա գտնվող քաղաքներ հիմնավոր Ջուղան, Նախիջևանը, Կարինը, Մանազկերտը, Դվինը, իսկ 10-11 դդ.՝ Հայոց Բագրատունյաց մայրաքաղաք Անին և այլ քաղաքներ դառնալով գիտության և մշակույթի, արհեստների և առևտրի խոշոր կենտրոններ: Հայկական թագավորության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքում նրանց կարևոր դերակատարության մասին են վկայում Կիլիկյան քաղաքներում հաստատված վաճառականական համայնքների ազգային և սոցիալական միավորումների վերլուծությունները: Կիլիկյան Հայաստանի օրինապահ և հուսալի գործընկերոջ վերաբերյալ հետաքրքիր փաստերի մասին են վկայում նաև Միջերկրական ծովի եվրոպական և մերձավոր-արևելյան նավահանգիստներում կնքված բազում առևտրային փաստաթղթերը¹⁰:

«...Նրանք ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմեղենները և մետաքսայա ու արծաթայա



կերպասները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Եվ Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն: Եվ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի ծամփորդ» Արևելքի ներսերը, իր ծամփորդությունը սկսում է այս Լայաս քաղաքից»: Այսպես է նկարագրում Այասը բոլոր ժամանակների աննահայտնի ճանապարհորդ-հեղինակներից մեկը՝ Սարկո Պոլոն¹¹:

Արդեն 12-րդ դ. առաջին կեսին խաչակիրների տիրապետության տակ գտնվող բոլոր մեծ քաղաքներում հաստատվել էր վենետիկյան, ջենովական, պիզայական վաճառականական բավական սովոր բնակչություն: Թեև վերջիններս ապահովում էին 13-14-րդ դդ. Արևելք-Արևմուտք առևտրային ապրանքաշրջանառության մեջ իրականացվող ներդրումների մեծագույն բաժինը, սակայն, նրանց հետ միասին, միջերկրածովյան ու սևծովյան տարածաշրջաններում, այդ թվում և Կիլիկյան Հայաստանում, բավական ծանրակշիռ ներկայություն ուներ իտալական տասնյակ այլ քաղաքներից ժամանած վաճառականությունը¹²:

Հայ առևտրական-ծովագնացները ծանրակշիռ մասնակցություն են ունեցել նաև «մանիլյան առևտրում»: Հատկապես ակտիվ են եղել գործնական կապերը պորտուգալացիների հետ՝ Հնդկական օվկիանոսում: Հայերի դերը «մանիլյան առևտրում» աճում է 7-րդ դարում, երբ բացի պորտուգալացիներից, Մանիլա մուտք էր թույլատրվում հնդիկ և հայ առևտրականներին¹³: Հայերն իրենց ձեռքում էին պահում Մանիլայի և Չինաստանի հետ Հնդկաստանի ունեցած մասնավոր առևտրի կեսը: Գործնականորեն Մանիլա կարող էին մտնել միայն հայ վաճառականների նավերը, քանի որ Անգլիան, Ֆրանսիան և Հոլանդիան մեծ մասամբ թշնամական հարաբերությունների մեջ էին Իսպանիայի հետ: Բրիտանական, ֆրանսիական և դանիական, հոլանդական Արևելահնդկական ընկերությունները սկզբնապես օգտագործում էին հայերի առևտրական մեթոդների և կապերի հնարավորությունները, մասնավորապես՝ Հնդկաստանում¹⁴:

7. David M. Lang, Armenia Cradle of Civilization. London, 1970, p. 9.
 8. Աղանյան Հ., Մարդասի հայ համայնքի ձևավորման պատմությունից, www.լրագիր.am, 6, 12, 2010 թ.
 9. Դանիելյան Է., Տիրապետում է Սեփի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը, ՊԲՀ, 2006, N2, էջ 3-12:
 10. Мартиросян А., Мировые пути через Армению и Переднюю Азию по Карте Пейтингера, Ереван, 2003, с. 70-71:
 11. Հակոբյան Հ., Ուղեգրություններ, աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Խ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Երևան, 1932 թ., էջ 44-45:
 12. Հայ ժողովրդի պատմություն, Խ. I, Երևան, 1971, էջ 172:
 13. Դանիելյան Էդուարդ Լ., Հայկական ծովային առևտրի զարգացման քաղաքակրթական գործոնները և միջազգային մրցակցությունը 17-րդ դարում, Ջեկուց, «Քեդաղ Մերչանտ» հայկական նավի հայտնագործությանը նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և «ԱՆԱՀԻՏ» ասոցիացիայի կազմակերպած միջազգային գիտաժողովում, հոկտեմբերի 5, 2010 թ., էջ 2:

Մադրասից, Սուրաբից, Բոմբեյից, Կալկաթայից և այլ նավահանգիստներից Մանիլա էին նավարկում հայկական դրոշով նավերը: Սուրաբից Մանիլա գնացող նավերի տերերն էին Խոջա Մինասը, Խոջա Ստեփան Մարկը, Յովհաննես Մարքարը¹⁵:

Շահ Աբասը նպատակ ունենալով շրջադարձելու առաջավորասիական առևտրական ուղղությունը դեպի Պարսից ծոց, արտոնություններ է շնորհում Յին Ջուղայից գաղթեցված և Նոր Ջուղայում հաստատված հայ վաճառականությանը: Ջուղայահայությունը մետաքսի առևտրի ուղիներով, մի կողմից՝ կասալյան-վուլգյան ջրային ճանապարհով մուտք է գործում Ռուսաստան և այնտեղից Եվրոպա, իսկ մյուս կողմից, Իրանով՝ Յնդկաստան: Այսպես ձևավորվում է ջուղայահայության հզոր վաճառական կապիտալը¹⁶:

Ջարգացած առևտրի մշակույթի մասին է խոսում Նոր Ջուղայի վաճառական երեխաների համար նախատեսված դպրոցի գոյությունը, որտեղ ուսումնասիրել են տնտեսական աշխարհագրություն, առևտուր, չափման միավորներ, գիտելիք տարբեր երկրների արժույթների մասին: Դպրոցում կարևորվել է հատկապես Յնդկաստանի տնտեսական կյանքի ուսումնասիրությունը, ինչը դասավանդվել է հա-



Մուս է անգլիական Արևելահնդկական ընկերության Իրանի հետ Ռուսաստանի վրայով կապ պահպանելու արտոնությունները: Եվ 1667 և 1673 թթ. ռուս-հայկական առևտրական պայմանագրի շնորհիվ արտաքին առևտրի մենաշնորհը երկար ժամանակ մնում է հայ վաճառականության ձեռքում¹⁸:

16-17-րդ դդ. մեծ մասամբ հայերի ձեռքում էր կենտրոնացված Բաքվից և Աստրախանից կատարվող ծովային առևտուրը, ինչի զարգացմանն էլ ավելի էր նպաստել Նոր Ջուղայի հայ վաճառականությունը¹⁹: Ջուղահայ առևտրական կապիտալն ուժեղ էր արտաքին շուկաներում ունեցած իր կապերով, միջազգային ապրանքափոխանակության մեջ ձեռքբերած իր ամուր դիրքով:

17-րդ դարի հայ վաճառական դասն՝ իր վրա վերցնելով Արևելքի եւ Արեւմուտքի միջուկ միջնորդ-վաճառականի դերը և մուտք գործելով համաշխարհային շուկա, ծավալում էր առևտրային լայն գործունեությունը²⁰: Հայ առևտրականությունը Յնդկաստանի ծովային առևտրում լայնորեն կիրառում էր նաև «ծովային վարկ» գործիքը²¹: Հայերն ակտիվորեն նպաստում էին նաև ազատ և անվտանգ նավագնացության ապահովմանը և «բաց ծովի առաջադիմական սկզբունքների» հաստատմանը²²:

Հայերի ծովային առևտրի բազմադարյա պատմությունը միևնույն ժամանակ դրամատիկ պատում է եվրոպական ծովահենների դեմ նրանց մղած պայքարի մասին: «Քեդաղ Մերչանտի» («Քեդաղի առևտրական») ճակատագիրը ծովահենության զոհ դարձած հայկական առևտրական նավերի թվին է պատկանում²³: Եվ այսօր դրա նավաբեկված մասերի հայտնաբերումը Դոմինիկյան Հանրապետության Կատալինա կղզու մոտ և ուսումնասիրությունը արժեքավոր ներդրում է համաշխարհային առևտրական նավագնացության պատմության մեջ և հայկական ժառանգության նշանակության գնահատման գործում:

(Հարունակությունը՝ հաջորդ համարում)



տուկ դասագրքով՝ գրված Կոնստանդ Ջուղայեցու կողմից (որ Յնդկաստանի տնտեսական, առևտրական կյանքի փորձագետ էր): Առևտրական ցանցի կառույցի մաս են կազմել հոգևոր թեմերը, որոնց տնօրինության ներքո է գործել համայնքների կրթական և մշակութային կյանքը: Հետևաբար, առևտրական համայնքներից կազմված «առևտրական սփյուռքը» եղել է մեկ ամբողջական, անկախ սոցիալական միավոր՝ իր առևտրական և կրթական ու մշակութային կյանքով¹⁷:

Ռուսական կայսրությունը զգուշանալով Հայկական վաճառականության հետ եվրոպական ընկերությունների մրցակցությունից և իր ներքին շուկային սպառնացող վտանգից, վերաց-

14. Барсегов Ю., Филиппины в морской торговле армян, “Анив”, 2008, N 5, с. 1-5:
 15. Барсегов Ю., Филиппины в морской торговле армян, “Анив”, 2008, N 5, с. 3:
 16. Байбуртян В.А., Армянская колония Новой Джульфы в XVII в., Ереван, 1969, с.325:
 17. Սալմազարյան Ա., Հայ առևտրական կամ խոջայական կապիտալի անկումը 18-րդ դարում, Լրագիր.am, 26/12/2014 թ., էջ 1-2:
 18. Խաչիկյան Շ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18 դարերում, Երևան, 1988, էջ 25:
 19. Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Կասպից ծովի հայկական նավատորմի պատմությունից, «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում», Այսա ծովային հետազոտությունների ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողով, 2010 թ. մայիսի 14-16:
 20. Дитмар А.Б., От Птолея до Колумба, М., 1989, с. 6.
 21. Խաչիկյան Շ., Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ 17-18 դարերում, Երևան, 1988, էջ 161-167:
 22. Барсегов Ю., Из истории борьбы армянского купечества против европейского пиратства в XVII в. (в связи с захватом «Нового Иерусалима» и «Санта Круза» английской пиратской организацией из Сиамы), дгР, N 2, 1984, с 35-42.
 23. Барсегов Ю., Дело королевского пирата Кидда, «Анив», 2006, N 5, с. 70-73.